ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ «ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՅՈՒՄ»

Հ. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Քրեական իրավունքի տեսության մեջ իր առաջատար տեղն ունի հանցագործության հասկացության հարցը, որը հայտնի չափով պատկերացում է տալիս այս կամ այն մտածողի քրեաիրավական հայացքների ընույթի մասին։ Ինչպես ժամանակի շատ մտածողներ, այնպես էլ Շահամիր Շահամիրյանը[1] այդ հարցը, քրեական իրավունքի այլ հարցերի հետ, բացատրել և հիմնավորել է նախ՝ բնաիրավական տեսությունների (բնական իրավունքի, աստվածային իրավունքի և հասարակական դաշինքի) դրույթներով, հետո միայն՝ դրական իրավունքով։

Շահամիրյանի աստվածային իրավունքի տեսության համաձայն ոչ մեկը իրավունք չունի հասարակության մեջ թագավոր լինել և իր կամքը թելադրել ժողովրդին, իսկ վերջինս էլ իր հերթին պարտավոր է արգելակել միապետական կարգերի ստեղծումը, խոչընդոտել դրանց պահպանմանը[2]։ Երբ խախտվում է հիշյալ պահանջը, ապա դրանում մեղավոր են ոչ միայն միապետները, այլև հենց ինքը ժողովուրդը, որի թողտվությամբ իրականացվում է նման կարգերի ստեղծումը[3]։ Այսպիսով, աստվածային իրավունքի տեսանկյունից հանցագործություն է համարվում ամեն մի արարք (գործողություն կամ անգործություն), որը նպաստում է կառավարման միապետական կարգերի ստեղծմանը և կամ դրա պահպանմանը։

Դրական իրավունքի տեսանկյունից հանցագործության հարցը Շահամիրյանը քննության է առել ապագայում ստեղծվելիք հայկական հանրապետության պայմաններում։ Ի տարբերություն ավատական կարգերի, որտեղ միևնույն արարքը հանցագործություն համարելու կամ չհամարելու հարցը կախված էր տիրող դասակարգի կամքը կատարող առանձին անհատների հայեցողությունից, հանրապետական կարգերում այն բացառապես որոշվելու էր օրենքով. «Ուրեմն մի ոք իցէ զի ըստ կամաց և ըստ հաճոյից իւրոյ իշխեսցի՝ ի վերայ մեր, եթէ ո՛չ ըստ Օրինօք գործոյ ձեռաց մերոց հատուսցէ մեզ ըստ արժանւոյն գործոյ մերոյ, զի ամենայն ոք... արժանի գտցի պատուոյ և պատժոյ ըստ արժանաւորութեան գործոյն իւրոյ»[4], «բառցցի և կորնչեսցի ամենայն չարագործ ըստ արժանի գործոյն ձեռաց իւրոց ըստ Օրինօք՝ առ՝ի պատիւ հասարակ ազգի»[5]։ Այս և համանման այլ դատողություններով Շահամիրյանն ավելի մատչելի ձևով է արտահայտել «չկա հանցագործություն, չկա պատիժ առանց օրենքի» սկզբունքի պահանջը։ Շահամիրյանը գտնում էր, որ հանցագործության հարցի լուծման համար անհրաժեշտ է ոչ միայն համապատասխան օրենքի գոյության փաստը, այլև այդ օրենքը պետք է սահմանված լինի այն հաշվով, որպեսզի հասարակությունը, ժամանակի առումով, հնարավորու-

---

1 *Շահամիրյանի արծարծած քրեաիրավական հարցերին իրենց ժամանակին անդրադարձել են Լեոն (Երկերի ժողովածու. հ. II, գիրք երկրորդ, Երևան, 1973, էջ 545), Ա. Հովհաննիսյանը* (Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия. Ереван, 1947, с. 145), *Գ. Գրիգորյանը (Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից. Երևան, 1957, էջ 113—115) և այլք։*

2 *Շ. Շ ա հ ա մ ի ր յ ա ն. Որոգայթ փառաց. Թիֆլիս, 1913, էջ 42—43։*

3 *Նույն տեղում, էջ 26—28։ Ժողովրդի վրա «մեղք» բարդելու փաստը պայմանավորված էր հայերին ավատատիրական կարգերի դեմ հանելու անհրաժեշտությամբ։*

4 *Նույն տեղում, էջ 19—20։*

5 *Նույն տեղում, էջ 40։*

թյուն ունենա իմանալ, թե որ վարվելակերպն է օրենքով արգելված և այն դրսևորելուց ինչպիսի պատիժ է սպասվում. «Նովաւ (օրենքով—Հ. Խ.) պարտաւոր առնէ մեղ հեռանալ 'ի գործոց չարութենէ որում ծանեաք պատիժս և նախատինս ըստ Օրինօք մերովք»[6], «յօրէնս և կարգս, և կանօնս ձեր զի ծանուսցէ ձեզ զոր ինչ գործ բարի և չար և զոր ինչ հարկաւոր գործելոյ և հրաժարելոյ»[7]։ Այլ կերպ ասած, Շահամիրյանը պահանջում է, որ պատասխանատվություն («նախատինք») սահմանող օրենքներին ընդհանրապես և քրեական պատիժ նախատեսող կամ պատժաչափը խստացնող օրենքներին՝ մասնավորապես, ետադարձ ուժ չտրվի։

Ինչպես ասվեց, դրական իրավունքի տեսանկյունից հանցագործություն է համարվում օրենքով արգելված ամեն մի արարք։ Սույն բնորոշումը վերաբերում է հանցագործության հասկացության բացահայտման ձևական կողմին։ Արդ՝ ի՞նչ էր հասկանում Շահամիրյանը նյութական առումով հանցագործություն ասելով։ «Որոգայթ փառացր», իր իսկ հեղինակի վկայակոչմամբ, հանդիսանում էր օրենքների մի այնպիսի ժողովածու, որը ելնում էր բացառապես ժողովրդի բարօրությունից[8], և այդ բարօրության դեմ ուղղված ամեն մի ոտընձգություն դիտվում էր հանցագործություն։ Չնայած Շահամիրյանը, որպես լուսավորական մտածող, բարօրությունը հասկանում էր ժողովրդի շահերի դիրքից, սակայն իրականում այն ուներ դասակարգային բովանդակություն և ըմբռնվում էր քաղաքական իշխանության ձգտող հայ առևտրական բուրժուազիայի աշխարհայացքով։ Բուրժուական գաղափարախոսները չէին պատկերացնում և չէին էլ կարող պատկերացնել մարդու բարօրությունը առանց արտադրամիջոցների մասնավոր սեփականության և տնտեսական գործունեության ազատության։ Բավական է նշել, որ «Որոգայթում» սեփականության մասնավոր ձևը և տնտեսական գործունեության ազատության անձեռնմխելիությունը երաշխավորվում էր այն պատժատեսակներով և պատժաչափերով, որոնք նախատեսված էին մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների համար[9]։ Դրա հետ միասին, պետք է նկատել, որ բուրժուազիան իր քաղաքական պայքարում հաջողության հասնելու համար չէր կարող բարօրության հասկացության մեջ չմտցնել այնպիսի պահանջներ (անձի կյանքի, գույքի, պատվի, արժանապատվության ապահովումը և այլն)[10], որոնք օբյեկտիվորեն չարտահայտեին նաև ստորին խավերի շահերը։ Հենց այս փաստի ուժով է, որ պատմական ասպարեզ իջած բուրժուազիայի գաղափարախոսների պահանջները ընդհանրապես և լուսավորականներինը՝ մասնավորապես, ձեռք բերեցին առաջադիմական բնույթ։ Այս տեսակետից «Որոգայթում» քրեական իրավունքի միջոցով պաշտպանվում էր նաև անձի կյանքը (հոդված 463), առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը (հոդվածներ 129, 466), ինչքային իրավունքները (հոդվածներ 466, 467), ազատությունները՝ այդ թվում և օտարազգիների խղճի ազատությունը (հոդվածներ 128, 129, 485) և այլն։ Սակայն Շահամիրյանը չէր տեսնում և չէր էլ կարող տեսնել, որ իր երազած հասարակարգը, որի դեմ գործած արարքների համար նախատեսում էր ծանրագույն պատիժներ (հոդվածներ 484, 486 և այլն), իրականում ներհակ դասակարգին երբեք չէր կարող տալ ամենացանկալի բարությունը՝ փաստացի ազատությունը. այն միայն փոխարինելու էր նրանց շահագործման մի ձևը մյուսով, ավելի կատարյալով։

«Որոգայթ փառացում» բավականին ծավալուն խոսվել է նաև հանցագործություններ ծնող պատճառների և դրանց վերացման ուղիների մասին։ Ծնող

---

6 Նույն տեղում, էջ 62։

7 Նույն տեղում, էջ 105։

8 Նույն տեղում, էջ 33—34, 97։

9 Տե՛ս, օրինակ, «Որոգայթ փառաց», հոդվածներ՝ 466, 467, 471, 472, 474 և այլն։

10 Այդ պահանջները, հասկանալի է, չէին արտահայտում աշխատավոր դանգվածների արժատական շահերը։

պատճառներից հիշարժան են միապետական կարգերի գոյությունը, սոցիալական անբավարար պայմանները և օրինականության բացակայությունը։ Վերջին հարցը, մեր կարծիքով, առավել հետաքրքրություն է ներկայացնում, ուստի անհրաժեշտ է կանգ առնել դրա վերլուծության վրա։ Ստեղծվելիք հանրապետական կարգերում օրենքների մասին Շահամիրյանի արած դատողություններից երևում է, որ եթե չկա օրենք, ապա չի կարող խոսք լինել օրինականության մասին[11]։ Նա օրինականության նկատմամբ ներկայացրել է որոշակի և հստակ պահանջներ, որոնցից առաջինը օրենքի պահանջի անխախտելիությունն է. «Եթե 'ի մէջ աշխարհին մի՛ գտցի Օրէն անխախտելի և եթէ գուցէ զի ես զերծից 'ի հատուցմանէ պարտուց մեղաց իմոց ատամնայարութենէ և միմիայն միով անձամբ (անգամբ—Հ. Խ.) զերծանելոյ իմոյ 'ի յօրինացն համանգամայն մտցէ անօրենութիւն 'ի մէնջ, զի վաղիւն դու փորես աչք եղբօր քոյ, միւսն յափշտակէ զինչ դրացւոյն, միւսն բռնադատէ կուսի պատուոյ և այլն»[12]։ Շահամիրյանը, խոսելով անցյալ ժամանակներում Հայաստանում տիրող անօրինականություններից առաջացած բազմաթիվ վնասների մասին, մասնավորապես նշում է. «Այնքանելի անիրաւութիւնք անցանելով 'ի մէնջ, մինչև շաղախեցաւ երկիր 'ի արենէ արդարոց անպարտից»[13], այսինքն, միայն անօրինականության պայմաններում կարող է անմեղ մարդը ենթարկվել պատժի։ Օրինականության հաջորդ պահանջը օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքն է՝ անկախ նրանց հասարակական դիրքից, սոցիալական ծագումից, կրոնական պատկանելությունից և այլն. «Ո՛չ մեզ (նկատի ունի հայերին—Հ. Խ.) և ո՛չ 'ի վերայ աշխարհին մերոյ մի՛ լիցի և մի՛ երևեսցի ո՛չ որ, ով ոք ո՛ր իցէ այր ինքնակալ և ինքնակամ 'ի արարս իւր որ ո՛չ պատժեսցի ըստ Օրինօք»[14]։ Օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքը Շահամիրյանի մոտ միաժամանակ ենթադրում է նաև ազգերի հավասարության սկզբունքը։ Այս առումով, նա տարբերություն չի դրել, թե հանցագործություն կատարող անձը քրիստոնյա է, թե մահմեդական, հայ է, թե այլազգի։

Եթե կա հանցագործություն, պետք է լինի նաև պատիժ։ Շահամիրյանը գտնում էր, որ աստվածային իրավունքի խախտման համար ժողովուրդն իր պատիժը պետք է կրի հանդերձյալ կյանքում, եթե մինչ այդ չուղղի իր սխալները[15]։ Ընդհանրապես «Որոգայթում» կրոնական բնույթի (այդ թվում և աստվածային իրավունքի) պահանջների խախտումը, զուտ քրեաիրավական իմաստով, հանցագործություններ չեն համարվում և չեն պատժվում։ Միայն մի դեպքում է արտաքնապես Շահամիրյանը այս կարգից նահանջ կատարել, երբ հայոց եկեղեցու դավանանքին պատկանող հայը հավատափոխ է լինում (հոդված 6)։ Եթե դավանանքը մեր ժամանակներում զուտ խղճի հարց է, ապա քննարկվող ժամանակաշրջանում հայ ժողովրդի համար այն դուրս էր դալիս դավանանքի շրջանակներից և ձեռք էր բերում քաղաքական-աղգապահպանման նշանակություն, որի հետևանքով հավատափոխությունը համարժեք էր դառնում ներկայիս դավաճանությանը։

Շահամիրյանը, ինչպես և իտալական խոշորագույն քրեագետ Բեկկարիան[16], պատժի կիրառման անհրաժեշտությունը տեսականորեն հիմնավորել է պետության և իրավունքի ստեղծման պայմանագրային տեսության դրույթներով։ Շահամիրյանի տեսակետի համաձայն, ժողովուրդը հասարակական

---

11 Երբ Շահամիրյանը խոսում է ավատական կարգերում գոյություն ունեցող անօրինականությունների մասին, նա նկատի ունի այդ կարգերում աստվածային և բնական իրավունքների ոտնահարման փաստերը։

12 «Որոգայթ փառաց», էջ 72—73։

13 Նույն տեղում, էջ 35։

14 Նույն տեղում, էջ 89։

15 Շահամիրյանի համոզմամբ միապետական կարգերում ապրելու փաստը ինքնին արդեն ժողովրդի համար պատիժ է։

16 Беккариа. О преступлениях и наказаниях. М., 1939, с. 204—206.

դաշինքով պետության հանրապետական ձևի առաջ պարտավորություն է վերցնում անշեղորեն ենթարկվել իր իսկ ստեղծած օրենքների պահանջներին և միաժամանակ համաձայնություն է տալիս այն խախտելու դեպքում կրել համապատասխան պատիժներ. «Ամենայն բնակիչք աշխարհին մերոյ կամաւ ընդունելութեամբ յանձն առնուն վարձ գործոց ձեռաց իւրոց թէ կեանս պատուականս և թէ մահ նախատանօք փոխանակ գործոյ անօրէնութեան իւրեանց ոչ 'ի յառնէ 'ի հրամանաւ ինքնակամ իշխանէ և ո՞չ 'ի սպան[ու]օղէ՝ եթէ ո՞չ միայնակ 'ի ձեռանէ իւրմէ հատեալ վճռէ Օրինաց իւրոց»[17]։ Այս ձևով պատժի կիրառումը կգոհացնի նույնիսկ պատժվողին, «քանզի վճիռն գործոյն իւրոյ ինքն ըստ կամաց և ըստ հաճոյից իւրոց է՝ հատ և ինքն ըստ անձին աղատապէս թագաւոր գոլով՝ կարգադրեաց օրէնս... և ինքն իւրն հնազանդ օրինաց իւրոյ արար պարտաւոր և մնայ ընդունիլ հատուցումն գործոց իւրոց թէ պատիւ եթէ պատիժ ըստ օրինաց իւրոց»[18]։

Անցնելով պատժի նպատակի հարցին, պետք է նկատել, որ այն Շահամիրյանի մոտ ձեռք է բերում բազմակի իմաստ։ Նախ՝ «Որոգայթում» պատժի կիրառումը հետապնդում է ընդհանուր նախազգուշական նպատակ. պատժելով հանցագործին, այդ երևույթը միաժամանակ ներգործում է հասարակության մնացած անդամների վրա՝ ետ պահելով նրանց հանցավոր ոտնձգություններից. «...և կալանաւորութիւնս (հանցագործի—Հ. Խ.) լինիցի դարման նշաւակութեան ապագայ տկարացելոց մերոց (հայ ժողովրդին)»[19]։ Իսկ ներգործության ուժը, ինչպես տեսանք, Շահամիրյանը վերագրում էր ոչ թե պատժի խստությանը (չնայած նրա մոտ պատիժներն այնքան էլ մեղմ չեն), այլ նրա անիուսափելիությանը։ Պատիժը, ընդհանուրից բացի, ունի նաև հատուկ կամ մասնավոր նախազգուշական նպատակ՝ հնարավորություն չտալ պատժվողին նոր հանցագործություն կատարելու. «...որ ի որ ոք պատճառէ որ իցէ՝ եթէ կամիցին ուխտաղանց լինելով գործել զչարիս իսկոյն ըմբռնեսցի անձն ամենայն ըղդայարանօք նորա պահելով անշարժ, զի ձեռն չարագործին մի՛ գոցի շարժում գործելոյ չարութիւն մինչև հատուցանելով վարձ գործոց չարութեան իւրոյ»[20]։ Ինչպես երևում է այս վերջին պարբերությունից, պատժի կիրառումը ենթադրում է նաև կատարած հանցագործության հատուցում։ Հատուցման տեսությունը գալիս է վաղ ժամանակներից և պաշտպանվել է նաև բազմաթիվ բուրժուական մտածողների կողմից։ Այսպես, Կանտը «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» թալիոնի սկզբունքի կիրառումը դիտում էր կատարած հանցագործության համար արժանի հատուցում[21]։ Չնայած Շահամիրյանը ընդունում էր «ամենայն բնութիւն մարդոյ բնականապէս խոստովանի ակն ընդ ական և ատամն ընդ ատաման արդարութիւն»[22] սկզբունքը, սակայն միայն երեք դեպքերում է ղեկավարվել դրանով (հարբած վիճակում սպանություն և մարմնական վնասվածք հասցնելու համար նախատեսվում են հարբեցնելու միջոցով պատիժներ. հոդվածներ 471, 472)։ Ինչպես Կանտը[23], այնպես էլ Շահամիրյանը հիշյալ սկզբունքով ձգտել են հավասարություն ստեղծել կատարած հանցագործության և դրա համար կիրառվող պատժի միջև։

Պատիժը պետք է նշանակվի ոչ միայն այն հաշվով, որպեսզի հանցագործը հատուցի իր հանցանքի համար, այլև միաժամանակ հնարավորություն

17 «Որոգայթ փառաց», էջ 76։

18 Նույն տեղում, էջ 21։ Այս մասին տե՛ս նաև էջ 9։

19 Նույն տեղում, էջ 9։

20 Նույն տեղում։

21 Курс Советского уголовного права. Т. 3, М., 1970, с. 32.

22 «Որոգայթ փառաց», էջ 72։

23 Л. И. Пионтковский. Уголовно-правовые воззрения Канта, А. Фейербеха и Фихте.—Ученые труды Всесоюзного института юридических наук НКЮ СССР. Вып. 1. М., 1940, с. 63.

ունենա վերադաստիարակվելու և ուղղվելու. «Բժշկեսցի 'ի տկարութենէ չարեաց իւրոց»[24]։ Սա արդեն պատժի դաստիարակչական կողմն է, որը պատժի նպատակների մեջ ամենաարժեքավորն է։ Դաստիարակման նպատակը «Որոգայթում» հիմնականում իրականացվելու էր հանցագործության կատարման դրդապատճառին համապատասխան պատժատեսակ նշանակելու միջոցով։ Այս երևույթն ակնառու կերպով դրսևորվել է 192-րդ հոդվածում։ Երբ մեկը հարվածել է մեկ ուրիշին, ապա դատարանը պատժատեսակ ընտրելիս պետք է ղեկավարվի հետևյալ կերպ. ա) եթե ամբաստանյալը ջղային է և ուժեղ, պետք է բանտարկել այնքան ժամանակ, մինչ մեղմանա և դառնա խոնարհ. բ) եթե հարուստ է, պետք է հատուցի իր «անիրաւ» հարստության չափին համապատասխան տոկոսներ, «զի իջցէ հպարտութենէ». գ) եթե իշխանազուն է և փառասեր, պետք է «հարկանելով գան հայրցի նմայ հռչակաւոր տեղի». դ) իսկ եթե նույն արարք կատարողը աղքատ է և այն կատարել է «'ի բնական եռացմանէ արենէ», պետք է տուժողը հարվածի նրան այնպես, ինչպես ինքն է հարվածել։ Այս վերջին դեպքում բացառապես դաստիարակելու նպատակով Շահամիրյանը ղեկավարվել է «ական ընդ ական, ատամն ընդ ատամն» սկզբունքով։

Պատժի կիրառման արդարությունը ապահովելու նպատակով Շահամիրյանը պաշտպանում էր կատարված հանցագործության ծանրության և կիրառվող պատժի խստության համամասնության սկզբունքը. «...բառցցի և կորընչեսցի ամենայն չարագործ ըստ արժանի գործոյն ձեռաց իւրոց»[25]։ Հայաստանի դլխավոր դատավորին տված լիազորագրում, մասնավորապես լիազորվողից պահանջվում էր «արդարութեամբ հատանեսցես վճիռ 'ի վերայ գործոց ձեռաց և բանից, ըստ իւրաքանչիւր գործոց ըստ Օրինօքն Հայաստանեաց»[26]։

Կատարված հանցագործության և կիրառվող պատժի միջև համամասնությունը ապահովելու նպատակով Շահամիրյանը նախատեսել էր որոշակի պատժասիստեմ, որի մեջ ամենածանրը մահապատիժն էր։ Վերջինս պատժասիստեմի մեջ ընդգրկելու հարցը քննարկվող ժամանակաշրջանում ձեռք էր բերել խնդրի նշանակություն. մտածողների մի մասը (Դիդրո, Վոլտեր, Բեկկարիա), բացառությամբ առանձին աննշան դեպքերի, դեմ էր մահապատժին, իսկ մյուս մասը (Ռուսսո, Կանտ և այլք)՝ կողմ էր։ Շահամիրյանը վերջին տեսակետի կողմնակից էր և նրա մոտ այն պայմանավորված էր ընդհանուր նախազգուշացման անհրաժեշտությամբ. «Մահ մեղաւորին [լինիցի] վասն նշաւակի կենդանեաց, զի զսպեսցեն կենդանիքն վարքս իւրեանց 'ի չարագործութենէ»[27]։ Եթե Բեկկարիան միապետության կողմնակից էր և մահապատժի կիրառմանը դեմ լինելով ցանկանում էր վերացնել այն վտանգը, որով առանձին անհատների ցանկությամբ մարդիկ զրկվում էին կյանքից, այդ թվում նաև՝ բազմաթիվ անմեղներ, ապա «Որոգայթում» մահապատժի կիրառումը նախատեսվում էր հանրապետական կարգերում, ուրտեղ այն իրականացվելու էր միայն օրենքի հիման վրա, օրենք, որը, ըստ Շահամիրյանի, արտահայտելու էր ժողովրդի կամքը, այդ թվում նաև՝ պատժվողի։ Մահապատժի կիրառման կողմնակից լինելով հանդերձ, Շահամիրյանը այնուամենայնիվ այս հարցում ցուցաբերել է իր հումանիզմը։ Նախ՝ բարոյական տեսակետից նա մահապատժի երևույթը դիտում էր նողկալի։ 221-րդ հոդվածով մահապատիժ իրականացնողի աշխատանքը համարվում էր անպատիվ և նա իրավունք չուներ հետագայում այլ աշխատանքի անցնելու։ Եթե ընդհանուր առմամբ դատավորները, իբրև մարդ, արդարադատությունը իրականացնելիս պետք է առաջնորդվեն սառը բանականությամբ՝ «մի տեսանելով զերեսս մարդոյ ոգորմեսցիս և խստանացուցանես սիրտ քո առ գանգատող և դատախաղս» (հոդված 59), ապա 225-րդ հոդվածի համաձայն, դատավորը մահապատիժ նախատեսող դոր-

24 «Որոգայթ փառաց», էջ 9։
25 Նույն տեղում, էջ 40։
26 Նույն տեղում, էջ 183—184։
27 Նույն տեղում, էջ 284 (հոդված 225)։

ծերը քննելիս պարտավոր է գթություն ցուցաբերել։ Բացի այդ, ժողովուրդը պարտավոր է սիրել այն փաստաբանին, որը օրենքի սահմաններում կկարողանա ազատել պաշտպանյալին մահվան դատավճռից (հոդված 226)։ Ավելին, մահապատժի դատապարտվածները, օրենքով սահմանված կարգով, կարող էին ներում ստանալ, մահվան վճիռը չէր կարող իրականացվել առանց հայոց տան (պառլամենտի) հավանության (հոդվածներ 223, 224) և այլն։ Վերը նշված միջոցառումներով Շահամիրյանը ցանկացել է նվազագույնի հասցնել մահապատժի կիրառման հնարավորությունը և սխալ դատավճիռների իրականացումը։

Հաջորդ պատժատեսակներն են՝ ազատազրկումը (15 օրից մինչև ցմահ), տուգանքը, մարմնական պատիժները (ծեծ և շիկացած երկաթով ձեռքն այրել), պաշտոնանկությունը և այլն։ Ելնելով ընտանիքի անդամների շահերից, Շահամիրյանը չէր թույլատրում մահվան դատապարտվածի ինչքի վրա բռնագրավում տարածել (հոդվածներ 220, 367)։ Բացի այդ, տուգանքներից գանձվող ողջ գումարը օգտագործվելու էր ընչազուրկների կարիքները բավարարելու համար։ Շահամիրյանի կողմից մարմնական պատիժների ընդունումը շատ դեպքերում ուղղված է եղել դաստիարակման նպատակին։

Ըստ «Որոգայթ փառացի» հանցագործության ենթակա, այսինքն հանցագործություն կատարող, կարող է լինել որոշակի տարիքի հասած, մեղսունակ անձը։ Քրեական պատասխանատվությունը սկսվում է անձի 18 տարին լրանալու հետ, իսկ դրանից պակաս տարիք ունեցողների նկատմամբ թույլատրվում է կիրառել միայն դաստիարակչական բնույթի ներգործության միջոցներ. «Ամենայն պատիժ 'ի վերայ քրէական մեղաւորաց կատարեսցի... թէ սեղաւորն գուցէ [գոցի] տի հասակի իւրոյ ավելի քան թէ ութնեւտասն ամաց, եթէ պակաս, խրատելով արձակեսցի իբր մանուկ» (հոդված 200)։

Չնայած Շահամիրյանն ուղղակի չի խոսում 18 տարին լրացած, բայց անմեղսունակության վիճակում գտնվող անձի կողմից կատարած հանցավոր արարքների պատժելիության հարցի մասին, սակայն նրա արած առանձին դատողություններից երևում է, որ նման դեպքերում ևս անձը չի կարող քրեական պատասխանատվության կանչվել։ 494-րդ հոդվածի դիսպոզիցիան պահանջում է որոշ կարգի պաշտոնատար անձանց աղատել աշխատանքից, եթե որևէ մեկի կողմից հասցրած վիրավորանքի դիմաց նրանք չեն պաշտպանել իրենց պատիվը, քանզի «ոչ կարաց պահել պատիւ կարգ աստիճանի ազատութեան իւրոյ, բայց 'ի խելագար յառնէ»։ Եթե նկատի ունենանք, որ «Որոգայթում» անձի պատիվը և արժանապատվությունը հիմնականում պաշտպանվում էին դատական կարգով, ապա դժվար չէ հետևցնել, որ եթե հոգեկան հիվանդի կողմից հասցրած վիրավորանքի նկատմամբ ցուցաբերած անտարբերության համար պաշտոնատար անձը չի ազատվում աշխատանքից, ուրեմն, Շահամիրյանը դրանով իսկ նշված հիվանդի արարքում բացառում է մեղքի դրսևորման փաստը։ Նշված՝ կարևոր հարցի ուղղակի լուծման բացակայությունը պետք է բացատրել նրանով, որ դեռ վաղ ժամանակներից հայ քրեական իրավունքում այն լուծվել[28] և լուծվում էր դրական առումով, ուստի և Շահամիրյանը ավելորդ է համարել դրա մասին առանձին դրել։

«Որոգայթ փառացում» հատկապես շեշտվում է, որ հանցագործության ենթակա կարող է լինել միմիայն դրա մեջ մեղսավոր անձը. «Հատուցումն վասն պարտուց քրէական մեղաց ոչ այլ ոք հատուսցէ բայց միայն անձն մեղաւորին որում գործ ձեռաց նորա գործեցաւ մեղս քրէականս» (հոդված 214)։ Դրանով իսկ բացառվում է անմեղ մարդկանց, մեղավորի հարազատներին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը։

«Որոգայթ փառացում» նախատեսված են հանգամանքներ, որոնք վերացնում են արարքի հասարակական վտանգավորությունը։ Որպես այդպիսին, նախ, պետք է նշել անհրաժեշտ պաշտպանության սահմաններում կատարած

---

28 Ա. Թ. Թովմասյան. Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք. Երևան, 1962, էջ 265—268։

արարքները։ 215-րդ հոդվածը տանտիրոջը իրավունք է վերապահում սպանել նրան, ով գիշեր ժամանակ գինված մտնում է նրա բնակարանը։ Նման դեպքերում «արիւն նորա ի ձեռանէ սպանողի մի խնդրեսցի»[29]։ Այս և այլ օրինակներում, հասկանալի է, սպանողը չի պատժվում անհրաժեշտ պաշտպանության սահմանակարգի ուժով։ Սակայն որպեսզի հիշյալ սահմանակարգի նպատակը չշարաշահվի, Շահամիրյանը նախատեսել է որոշակի պայմաններ և միայն այդ պայմանների առկայության դեպքում կարող է խոսք գնալ անհրաժեշտ պաշտպանության մասին։ 215-րդ հոդվածի դիսպոզիցիայից երևում է, որ տվյալ դեպքում արարքը արտաքնապես պետք է բավարարի հետևյալ պահանջներին. ա) հարձակվողը պետք է զինված լինի սուսերով. բ) հարձակումը պետք է կատարվի գիշեր ժամանակ և այն էլ ժամը 21-ից հետո. գ) հարձակումը պետք է կապված լինի ուրիշի բնակարան մտնելու հետ. դ) այն կրելու է հանկարծակի բնույթ։ Քանի որ գործնականում դժվար է տվյալ դեպքերում պարզել հարձակման նպատակը (սուսերով ցանկանում է սպանե՞լ, թե՞ մարմնական վնասվածք հասցնել), ուստի խնդրո առարկա չի դարձվում հարձակման նպատակը։ Իսկ 461-րդ հոդվածը արդեն անհրաժեշտ պաշտպանության առկայության հարցը սերտորեն կապում է ոտնձգության նպատակի հետ, համաձայն որի. եթե մեկը հանդգնաբար մտնում է ուրիշի տուն կռվելու կամ վրեժ լուծելու մտադրությամբ, ապա տանտերն այս դեպքում կարող է «ազատապէս հարկանել և դուրս ձգել մինչ խոցել, այլ ոչ սպանել»։ Անհրաժեշտ պաշտպանության նման սահմանափակումը պայմանավորված է ոտնձգության վտանգավորության աստիճանի և դրանից պաշտպանվելու համար ընտրված միջոցի համամասնությամբ։ Այս դեպքում արդեն հարձակվողը չպետք է զինված լինի և հարձակումն էլ չպետք է կատարված լինի գիշեր ժամանակ. հանգամանքներ, որոնք սակավ են դարձնում հանցագործության վտանգավորության աստիճանը։

Ամեն դեպքում, երբ մարդու կյանքին իրական վտանգ է սպառնում, նա կարող է որպես անհրաժեշտ պաշտպանություն ընտրել հանցագործին սպանելու միջոցը. «Աւազակ ոմն եթէ մէջ աւազակութեան իւրոյ գուցէ դտցի ջատագուութիւն և 'ի ձեռնէ ջատագովողէ մեռցի աւազակն, արիւն աւազակին մի խնդրեսցի 'ի ջատագովողէ» (հոդված 191)։ Ավազակությունը, ինչպես մեր օրերում, այնպես էլ XVIII դարում իրենից ներկայացնում էր մի այնպիսի հանցագործություն, որը իրական վտանգ է սպառնում հարձակման ենթարկվողի կյանքին, ուստի և դրանից պաշտպանվելու համար կատարված սպանությունը Շահամիրյանը դիտում է անհրաժեշտ պաշտպանություն[30]։

Արարքի հասարակական վտանգավորությունը վերացնող մյուս հանգամանքն է ծայրահեղ անհրաժեշտությունը։ Շահամիրյանը, խոսելով հայ ժողովրդի թույլ տված մեղքերի գնահատման հարցի մասին, մասնավորապես նշում է, որ «քաղցեալն կերաւ և յագեցաւ, մերկն զգեցաւ, գեղեցիկն սիրեցաւ և այլն, որ ամենայն բնութիւն մարդոյ ո՛չ ոք կարէ զսպել անձինս իւր 'ի այսպիսի բնական մեղաց ո՛չ ուտող և ո՛չ զգենօղն և ամուսնացեալն կարի զրկիլ 'ի բարութենէ Տէառն, և կուրուսանել պատիւս ազատութեան իւրոյ»[31]։ Եթե նկատենք, որ հայ լուսավորականը մեր ժողովրդի թույլ տված այդօրինակ «մեղքերը» պատժելի չի համարել, նույնիսկ կրոնաաստվածաբանական իմաստով, ապա հասկանալի է, որ երբ մեկը իր առավել կենսական պահանջները (մերկությունը ծածկելու, քաղցը հագեցնելու և այլնի) բավարարելու համար կատարում է արտաքնապես հանցագործությանը նման որոշակի արարք, ուրեմն, առավել ևս, չի կարող պատժվել քրեական իմաստով։ Այսպիսով, Շահամիրյանի մոտ այդ և համանման բնույթի արարքները փաստորեն գնահատ-

29 «Որոգայթ փառաց», էջ 250 (հոդված 115)։

30 Անհրաժեշտ պաշտպանության մասին տե՛ս նաև հոդված 363։

31 «Որոգայթ փառաց, էջ 99։

վում են որպես ծայրահեղ անհրաժեշտություն[32]։ Ինչպես տեսնում ենք, այստեղ քննարկվող հարցն իր մեջ ընդգրկում է միայն մարդու առավել կենսական պահանջների բավարարման անհրաժեշտությունը, սակայն «Որոգայթի» 389-րդ հոդվածը ցույց է տալիս, որ Շահամիրյանի մոտ ծայրահեղ անհրաժեշտության սահմանակարգի ծավալը դրանով չի սպառվում։ Նշված հոդվածով, հայկական զորքը պատերազմի ժամանակ իրավունք չունի քանդելու թշնամու քաղաքացիական նշանակության շինությունները, «բայց յայնմանէ որ հարկաւոր լինիցի դաշտեցուցանել շուրջ ամրոցի բերթօրէից առ 'ի ապահովութեանց, և որ ոք ամրոց թշնամեաց պատերազմաւ ստացեալ, եթէ հարկաւոր լինիցի մեզ աւերել և քակել վասն աջողութեան պատերազմի մերոյ պարիսպն և բուրջն ամրոցաց և բերթօրէից և տուն վառօդի և ջաբախանայի, և բնակութիւն դինուորաց միայն աւերեսցի»։ Այս օրինակում արդեն Շահամիրյանը, մի կողմից թույլ է տալիս ավելի մեծ արժեքներ ձեռք բերելու համար (պատերազմը շահել, զինվորների անվտանգությունը ապահովել) ոչնչացնել առավել նվազ կարևորության արժեքները (ռազմական և որոշ տարածքում գտնվող քաղաքացիական բնույթի շինություններ), մյուս կողմից՝ արգելում որոշակի անհրաժեշտությունից ելնելով (բայց ոչ ծայրահեղ) վնաս հասցնել նույնիսկ թշնամու նյութական արժեքներին։ Սա ևս Շահամիրյանի հումանիզմի դրսևորումներից մեկն է։

Շահամիրյանը բավական հետաքրքիր ձևով է լուծել ապաստանի իրավունքի հարցը։ Հիշյալ իրավունքից օգտվում են ոչ միայն օտարերկրացիները, այլև հանրապետության քաղաքացիները՝ իրենց իսկ հայրենիքում։ Այս վերջին դեպքում ապաստանի իրավունքը սերտորեն կապված է բնակարանի անձեռնմխելիության հետ։ 185-րդ հոդվածով պաշտոնատար անձինք կամ սրանց ներկայացուցիչները, թեկուզև հանցագործին բռնելու նպատակով, եթե բնակարանի դուռը բաց չէ, իրավունք չունեն այն ջարդելու միջոցով ներս մտնել։ Իսկ 327-րդ հոդվածով՝ «ամենայն փախստական 'ի ամենայն ազգէ որ լինիցի եթէ մտցի աշխարհն մեր գտցի պահպանութիւն 'ի մէջ ըստ Օրինօք մերոյ»։ Երբ Հայաստանում ապաստան գտած օտարերկրացին իր հայրենիքում քաղաքացիական բնույթի պարտավորություններ ունի, նա ամեն դեպքում դրանք պետք է կատարի[33]։ Եթե ապաստան գտածը կատարել է այնպիսի հանցագործություն, որը կապված է եղել նյութական արժեքների հափշտակման հետ, նա պարտավոր է հափշտակած գույքը «ըստ Օրինօք մերոց յետս դարձուցանի Տեառն իւրոյ, անձն իւր միայն փրկեսցի 'ի պատժոյ դատաստանի և զինքն մնայ նախատանօք» (հոդված 327)։ Շահամիրյանը, օտարերկրյա հանցագործին քրեական պատասխանատվությունից ազատելով, նրան չի ազատում բարոյական պատասխանատվությունից՝ նախատինքից։

---

32 Կաղմակերպվելիք Հայկական հանրապետությունում ընչաղուրկների համար Շահամիրյանը նախատեսել էր մի շարք միջոցառումներ, որոնցից հիշարժան են՝ ա) պետության հաշվին աղքատանոցների բացումը (հոդվածներ 161, 177). բ) անվճար բժշկական օգնությունը (հոդված 262). գ) անտառներից անվճար սննդի միջոցների հավաքումը (հոդված 266) և այլն։

33 Այս դեպքերում քաղաքացիական պարտավորությունները կատարելիս պետք է ղեկավարվեն հայկական օրենքներով, որն ապաստան գտածի համար ստեղծում էր ավելի նպաստավոր պայմաններ։

Ամփոփելով մեր համառոտ հաղորդումը, կարող ենք ասել, որ Շահամիր Շահամիրյանը «Որոգայթ փառացով» հայ քրեաիրավական միտքը բարձրացրեց մի նոր աստիճանի։ Եթե այդ աստիճանը միանգամայն բնական էր դիտվում եվրոպական բուրժուական մտածողների կողմից քրեական իրավունքի բնագավառում առաջ քաշած նոր սկզբունքների շարքում, Հայաստանի համար Շահամիրյանի գաղափարներից շատերը նորություն էին։ Նա հանցագործության փաստը սերտորեն կապեց համապատասխան օրենքների գոյության և արարքի վտանգավորության հետ։ Պատժի մեջ Շահամիրյանը տեսավ ոչ միայն կատարված հանցագործության հատուցման, ընդհանուր և հատուկ նախազգուշացման, այլև հանցագործի դաստիարակման և ուղղման նպատակ։ Նա մշակեց որոշակի պատժասիստեմ, որը պետք է ապահովեր պատժի նպատակի իրագործումը։ «Որոգայթ փառացում» քրեական իրավունքի դրույթները ներծծված են հումանիզմի գաղափարներով։ Նույնիսկ մարմնական պատիժների գոյության փաստը (որքան էլ տարօրինակ թվա) ոչնչով չի կարող հակասել ասվածին։ Եթե Արևելքում, այդ թվում և Հայաստանում, մարմնական պատիժները հանատարած բնույթ էին կրում, ապա «Որոգայթում» այն խիստ սահմանափակված է։ Մարմնական պատիժների նախատեսումը մեծ մասամբ կապված է դաստիարակչական նպատակի իրականացման հետ և հիմնականում ծառայում է առանձին տեսակի հանցագործությունների դեմ պայքարելուն։ Շահամիրյանն այդ տեսակետից ժամանակի մտածողների շարքում միայնակ չէր։ Նա այնքան էր տարված հումանիզմի գաղափարներով, որ չէր տեսնում, թե իր իսկ կողմից սահմանված ապաստանի իրավունքի միջոցով որքան էր դժվարանում ծանր հանցագործությունների դեմ պայքարելը։ Պատժի անհատականացման, օրենքի առաջ բոլորի հավասարության և նրա պահանջի անխախտելիության ու հետադարձ ուժ չունենալու սկզբունքները, ինչ խոսք, առաջադիմական բնույթ ունեին։

ВОПРОСЫ УГОЛОВНОГО ПРАВА В «ЗАПАДНЕ ЧЕСТОЛЮБИЯ»

Г. С. ХАЧАТРЯН

(Резюме)

Армянский мыслитель XVIII в. Шаамир Шаамирян дал наиболее целостное освещение вопросов уголовного права с позиций просветительства. В его трактате «Западня честолюбия» получили проявление такие прогрессивные принципы и требования, как: «нет преступления, нет наказания без закона», индивидуализация наказания и др., которые, по Шаамиряну, должны были быть положены в основу осуществления уголовного правосудия в будущей армянской республике.